

աւելի աջող կարող է կատարել իր պաշտօնը,
աւելի առաջադեմ լինել, աւելի ինքնաձանա-
չութեամբ իր գործը առաջ տանել, քան թէ
տգէտ մարդ, տգէտ արուեստաւոր:

U.

ՆԱՄԱԿ ԳԻՒԼԻԶԻ ԳԻՒՂԻՑ 1)

Անդրեմբերի 5-ին

Տիուր է շատ և միակերպ պատերազմական կեանքը։ Մի օր այստեղ, միւս օր այլ տեղ, թափառական հրէայի նման անցնում ես օրերը։ Համեմով նշանակած տեղը, հաւատացած չես, որ կը մնաս արդեօք այստեղ մի կամ երկու օր, որ փոքր բնչ հանդարտվես և աղատ չունչ քաշես, փրկվելով ճանապարհի շոքից և սաստիկ թողից որ մանում է աչքերի և շնչառական գործիքների մէջ։ Պատահում է, որ յանկարծ գիշերով, երբ նոր ես ընկել Մօրֆէի գիրկը, զար-

Ես կարծում եմ, որ միայն Թիֆլիսի հայերը անհպատակ հազար մանէթներ են ծախտում մատուռների վերաբերյալ։ Հայը, ցաւալի է ասել որ հիւանդ է այս ախտով, որ մեծ ձգություն ունի եկեղեցիներ և մատուռներ չինել, անում է այս որ ասեն թէ այս ինչ պարունի կամ այն ինչ քաղաքը հայերի գործն է սա, Այս ախտը որ շատ տարածուած է հայերի մէջ, փառասիրութեան ախտն է Ալէքսանդրապոլի հոյական քարաշէն եկեղեցին որի վրա ինչպէս լսեցի 60 հազար մանէթ փող է ծախսվել, ապացոյց է հայերի փառասիրութեամբ հիւանդ լինելուն, ինձ ասացին որ այս եկեղեցին ներկայացնում է Անի քաղաքի եկեղեցու ձեր և չինված է այն նպատակով, որ լինի յիշատակ յետագայ սերունդի համար։

բովածիւններ և մտածմունքներ, երբ անցնելով
կամ մտնելով հայերի գիւղերի մէջ, լսում ես
գիւղականներից այն զրկանքները, տանջանք-
ները և սպանութիւնները, որոնցով փառաւե-
րում են իրանց բարբարութիւքերի արխմար-
բու և մոլեւանդ զօրքելը. Հայ գիւղականների
կեանքը նկատելով տեսնում ես, որ շատ վըշ-
տալի և աննախանձ զրութեան մէջ է նա, թէ
տնտեսական և թէ առողջապահական կողմից.
Ոչինչ մտաւոր զարգացում չես տեսնում նրանց
մէջ, և որ առաւել ևս ցաւալին է, չես տես-
նում նոյնքամ նրանց առաջնորդողների՝ քահա-
նակերի մէջ. Մտածում ես, թէ մինչեւ երբ պէտք
է մեր ազգը մնայ այսպիսի խաւարի մէջ, միթէ
արդէն ժամանակ չէ դարնալ դէպի լոյսը. Բայց
խաւար ամպերը, եղբակացնում ես ցաւակցա-
բար, դեռ շատ ժամանակ կը պատեն մեր ազգի,
մասնաւանդ գիւղացիների մտաւոր զարգացման
միջնորդը, քանի որ չունենք ուսումնարաններ
և ուսումնական քահանաներ գիւղերի մէջ.

Նպատակը շատ գովելի է, որ մինք վերա-
կանդառւմ ենք մեր հոռովթեան յիշտատակները
Բայց այս նպատակին համար առա-
ւել ևս գովելի կը լինէր, եթէ եկեղեցին շինվէլ
այսպիսի մեծ գումարի չորրորդ մասով միայն
իսկ մնացած մասերը գործ ածէինք աղդային
կարօտութիւնների և պակասութիւնների համար
Սյս մեծ գումարի երեք մասը, որ 45 հազար
մանէթ փող է, եթէ մինք ծախոս արած ըլ լի-
նէինք և պահած մինչև այժմ, կարող էինք իս-
կայն օգնութեան ձեռք տալ թիւքիայից դէպի
Անդրբիկիս գաղթած հայերին: Կամ թէ այս
գումարով կարող էինք ժողովրդական ուսումնա-
րաններ բացել մի քանի գիւղերի մէջ, կամ թէ
ժողովրդական ուսումնացիներ պատրաստել, որոնց
մէջ մեծ կարօտութիւն ունի ազգը:

Աւելքսանդրապոլից մինչև Մարդարապատ
գիւղը ողջ հայերի գիւղերով էր անցնում պարկը
որը գիւղացիներն ընդունում էին զանգակ խփե-
լով և որտեղ հարկաւոր էր օգնութիւն տալով եղ-

Ճատ ծշմարիս են ասում, որ երբ քո տըխ-
րութիւնը կամ ուրախութիւնը հաղորդում ես
միւսին, սորանով որպէս թէ, եթէ ուրախ ես
առաւել ես ուրախանում, իսկ եթէ տխուր ես,
թեթևանում ես տիրութենից Այս պատճառով
և ես ձեւքս եմ առնում զրիչը և հաղորդում
ազգակիցներիս այն ցաւալի դէպքերը, անմիսի-
թար տպաւորութիւնները և մտածմունքները,
որոնցով Ու էր իմ ճանապարհորդութիւնը առա-
ջին կովկասեան արտիլերիայի պարկի հետ
կիւրիւկ-Դարա զիւղից մինչև Գիւլիլի զիւղը.
Արդէն կիւրիւկ-Դարաքի մէջ զիւղացներն ինձ
պատմեցին որ թիւրքերի զօրքը, երբ ուռւմները
դեռ չէին անցել նրանց ասհմանը, մտան զիւղի
մէջ և ողջ ցորենը, գարին և խօսը որպէս թէ
գնեցին նրանցից ձեռագիր տալրվ. Մուխտար
փաշայի անունով, որ փողերը յետոյ ստանան-
քայց յայտնի է, որ այս խորամանկ խարէու-
թիւն է եղել փաշայի կողմից և զիւղացները
ոչինչ չեն ստանայ ինչպէս և իրանք խոստովա-
նեցին. Արանց յետոյ համարձակում է թիւր-
քիան պաշտօնապէս հարատարակել, որ ստաների
զօրքը մտնելով նորա զիւղերի մէջ, խլում է
որպէս թէ զիւղացների ստացուածքը և փող
չէ տալի, թէն յայտնի է, որ որտեղ և մտնում է
մեր զօրքը, իրանք թիւրքերը իսկոյն քերում
են ամեն պաշտօները և ծախում, փողը խկոյն
ստանաւամ.

ստանալով՝
Կիւրիկ-Դարբախց դուրս եկայ ես առաջին
պարկի հետ օգսատոսի շն զէալի երեանեան
քանակը. Կիփլի-Զաղազաղ սահմանից մինչև Ալէք-
սանդրապոլ վերջին թիւրքահպատակ հայերի
գիւղն էր, որտեղ մի ժամ հանգիստ ունեցաւ

և կը բերեն անողատճառ զիւղացիներին։

Եթէ մենք ուսնցել էինք գիւղերի մէջ ուսումնական քահանաներ, որոնք ստացած լինէին առողջապահական և բժշկական գոնէ սկըզբունքների հասկացողութիւնը, այն ժամանակ գիւղերը իրանց բնակիչներով այսպիսի աննախանձ դրութիւն չէին ներկայացնի մեզ: Ուրեմն հարկաւոր է անշուշտ, որ մեր յետագայ գիւղական քահանաները, որոնք պէտք է Էջմիածնի ճեմարանից դուրս գան, ուսանէին այստեղ նոյնպէս և առողջապահական և բժշկական զլսաւոր և շատ հարկաւոր սկզբունքները. Ես թոյլեմ տալիս ինձ խորհուրդ տալ ճեմարանին, որ մտցնէ իր գասերի մէջ քահանայացուների համար և մասնաւոր գասեր վերոյիշեալ առարկաներից: Հասկանալի է, ի հարիէ, որ այս գասերի կարդացողը պէտք է լինի հմուտ բժշկներից մինը. Բայց քանի որ չունենք մենք գիւղերի մէջ լուսաւորեալ հոգևորական և աշխարհական այսպիսի բժիշկներ, թող գիւղացիները մի քանի գիւղերից կազմէին հասարակութիւնը և փող հաւա-

քելավ վարձէին ֆելդչեր արդէն ծառայութեան մէջ եղած և փորձառու, գնէին հարկաւոր դեղերը, որոնցով նա կարող էր գոնէ սկզբնական օգնութիւն տալ հիւանդին այցելելու ժամանակ, որ անտես մնալով, չը սաստկանայ առաւել ևս հիւանդութիւնը և այն ժամանակ թժիշկն ևս ոչինչ հնարքով չէ կարող փրկել նրան. Չեր սուրբ պարտաւորութիւնն է, զիւզական քահանաներ, որ յորդորէք ձեր հոտը և համոզէք նրան քարոզներով, որ կատարէ իմ առաջարկած այս մլոցոցը. Ներեցէք ինձ ասել ձեզ, հայրեր, որ դուք և այլ ձեզ նմանները շատ միահյումանի էք հասկացել քահանայական պաշտօնը: Միթէ՞ սա պարունակում միայն նորա մէջ, որ կնքում, պահպառմ և վերջապէս թաղում էք ձեր հոտը: Դուք համարվում էք ժողովրդի համար ինչպէս հոգեսր, նոյնպէս և մարմնաւոր հայրեր: Ինչո՞ւ ուրեմն դուք չը պէտք է աշխատէք, որ բարելաւացնէք ձեր որդիքների տնտեսական և առողջապահանական պարագաներ:

կան դրութիւնը: Իսւք գոնէ փոքր ինչ առաւ-
ել էք զարգացած ձեր ժողովրդից, դուք կա-
րող էք ստանալ լրագիրներ, զրքեր, որոնցով և
կարող էք առաջնորդել նրանց:

Ինչո՞ւ որտեղ չը կայ ուսումնարան և ուսու-
ցիչ, դուք չէք հաւաքում դիւդացիների երեխա-
ները և չէք սպորեցնում նրանց գոնէ կարգաւ
և զրել հայերէն: Սորանով ևս մեծ զործ կատա-
րած կը լինէլիք դուք:

Աս աչ մի գիւղի մէջ չը տեսայ քամբախտարար այսպիսի մի եռանդ քահանայի կողմից, Նա մի և նոյն գիւղացին է, ուրիմանում է, ցանում և հնձում է, պահում է անասուններ, ինչպէս և զիրք ունենալու կարգալու, կարծես թէ քահանաների փրկութիւնը պարունակվում է Արարատ ամսագրի մէջ, որ պարտադիր ստանում են նրանք ամեն տեղ և այն էլ մի քանի ամիսնե-

զիւղացին, Զանազանութիւնը առաջնորդ երկրորդից միայն երկար չորեք են և այն որ կը նքում, պատկանմ և թաղում է, Աս ակամայ հետացայ իմ ոկսած ճանապարհարգութիւնը նկարագրելոց, այժմ կրկին յետ եմ դառնում գեղի նրան:

Սարդարապատ գիւղը չը հասած, պարկը օգոստոսի 4-ն դուրս գալով Բողադ-Կէսան գիւղից և անցնելով Մաստար գիւղով, իջևանուեցաւ Տալին գիւղի մէջ միւս օրն երեկոյեան, որտեղ մեաց մինչեւ առաւուը: Ես օգուտ քաղելով, քանի որ մութը չէր պատել, հեամաքրքրվեցի տեսնել մօտից Տալին գիւղի մէջ շնոված հին, հոյակապ մեծ եկեղեցին, որ երեւում էր հեռուից արդէն՝ չը հասած դեռ գիւղին շատ մօտ: Եկեղեցին ողջ շնոված է տաշած քարից և բաւական մեծ է. գմբէթն կիսով չափ քանդված է և պատերից մի քանի տեղ նոյնպէս: Մասնելով եկեղեցու մէջ տեսնում ես, որ ողջ պատերն ծածկված են եղել գաջով, որի հետքը մնացել է միայն սեղանի գմբէթի տակ, որի վերա և երեւում

Են պատկերներ կիսով չափ ամբողջ մնացած և ատակը հայերէն գրված։ Ես ցաւում եմ, որ չը ե կարելի է, որ մի տեղ գիւղաքաղաք և քաղաք ես հիմնէին միչև այժմ,

կարտղացայ ոչ մի դրվագ կարդալ, որ կար և պատերի մի քանիսի վերս և որ կամ շատ բարձր էր կամ թէ տառերն շատ տեղ ջնջվել էին, Բնակիչներն ասում են թէ 1500 տարիից աւելի է, որ շնչած է այս եկեղեցին, որի մէջ, ինչպէս ձայնում է աւանդութիւնը, եղել է 40 հազար պատկ: Ուրեմն եկեղեցին շնչած է մեր թագաւորութիւնին, և ոս հաւանական է շատ

սորսները ժամանակ, և որ հաւատական է շատ, որ այժմեան գիւղի տեղ եղել է հնուց բազմամարդ քաղաք, որի հետքը անդամ չէ երեսում այժմ։ Տեսնելով այս փառաւոր եկեղեցին այսպիսի քանդված դրութեան մէջ, ես յիշեցի Ալէքսանդրապօլի հոյակապ եկեղեցին, որի վերահայերը հազարներ են ծախսել, իսկ սորա վրա, որ նոյնպէս հնութեան յիշատակ է, խնայել են մի քանի հարիւր մանէթ, որ չը քանդվի առաւել ևս ժամանակի անինայ ձեռքից։ Հայի բանութիւնն է ալս։ Նա ծախս կանի ահագին լրաց զսրբ աստրաս սոլուտակութիւնը զատարելու համար այրել են նոյնպէս եկեղեցին, որ այժմ առանց յարկի է և միայն պատերն են մնացել։ Բնակիչներն աղատուել են փախչելով այս գաղաններից, միայն եկեղեցու ծեր պահապանը չը կարողանալով փախչել, մորթվել է քիւրդերի ձեռքից, ինչպէս ասաց ինձ բնակիչներից մինը։

1) Գիւլիջի հայկական գիւղը, որտեղ գտնվում
է այժմ Երևանի բանակի մի մաս, գտնվում
է Երևանի բաւառում և 1949ի գիւղից 27
մզոնն ենուու է։

